R5
Արտակարգ իրավիճակների և անվտանգության նախագծերի կառավարման կենտրոն

R5
Center for Project Management of Emergency Situations and Security

+374 99 494955

contact.r5center@gmail.com

ք. Երևան, Գևորգ Քոչար 21/7

@R5.Center

R5
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Հարգելի տիկին Սարգսյան

ՀՀ ՆԳՆ Հանրային խորհրդի կազմում ներգրավվելու համար ես դիմում եմ թերևս առաջին անգամ՝ 3 հիմնական պատճառով.

1.Հաշվի առնելով ՀՀ ՆԳՆ վերջին տարիների որդեգրած թափանցիկ, հանրային քաղաքականությունը, կարծում եմ, որ նոր ձևավորվող հանրային խորհուրդը ներկայումս առավել քան երբևէ իր ներդրումը կունենա համակարգվող 3 ոլորտների զարգացման հարցում, կլինի իրապես աշխատող մարմին:

2. Առաջին անգամ է, որ այս ոլորտը ղեկավարում է կին: Իմ ընկալմամբ դա կարևոր է այնքանով, որ արժևորվում է նաև կին-ղեկավարների դերն ուժային կառույցներում, ուստի արդյունավետ կլինի համատեղ աշխատել անմիջապես Ձեր ղեկավարած խորհրդում:

3. Ինչպես նաև R5 Կենտրոնն ու ես կարող ենք մեր համեստ ներդրումն ունենալ ոլորտի շարունակական լավարկման հարցում, քանի որ կապրակտիկայի վրա կուտակած փորձ, հանրային շփումների մեծ շրջանակ, մասնագիտական ձեռքբերումներ:

Հասարակական խորհուրդը լինելով նախարարին կից մարմին, կարող է էական նաստ բերել լիազոր մարմնի և բնակչության միջև կապի ամրապնդման հարցում:

Հավելեմ նաև, որ իմ մասնագիտական գործունեությունը սկսել է դեռևս 2008 թ.-ից, երբ սկսեցի ծառայել ՀՀ ԱԻՆ Փրկարար ուժերի կարևորագույն օբյեկտների պահպանության բաժնում, որպես ավագ հրշեջ-հրահանգիչ, հաջորդիվ սկսեցի դասավանդել և այլևս իմ մասնագիտական ուղին չընդհատվեց: 2020 թ. հիմնեցի R5 Կենտրոնը, որն ունենալով 4 տարվա պատմություն, այսօր համարվում է ոլորտի կարևոր դերակատարներից մեկը, ինչի ապացույցը տասնյակ հեղինակավոր գործընկերների առկայությունն է, հետևողական և թափանցիկ գործունեությունը:

RISK
REDUCTION
RESPONSE
RECOVERY
RESTART

R5.

R5
Արտակարգ իրավիճակների և անվտանգության նախագծերի կառավարման կենտրոն

R5
Center for Project Management of Emergency Situations and Security

Իմ և Կենտրոնի նպատակը մեկն է՝ ներդրում ունենալ մեր հասարակության շրջանում անվտանգության գիտակցման հարցում, և այդ նպատակին հասնելու համար նախևառաջ համագործակցել Փրկարար ծառայության՝ լիազոր մարմնի հետ:

Հանրային խորհրդում ներառվելու դեպքում պարտավորված կլինենք էլ ավելի մեծ եռանդով, թիմային աշխատել՝ ի նպաստ մեր երկրի և բնակչության անվտագության ապահովման:

Հարգանքով՝

հիմնադիր-տնօրեն ***Անի Տերտերյան***

12.12.2024 թ.

+374 99 494955

contact.r5center@gmail.com

ք. Երևան, Գևորգ Քոչար 21/7

@R5.Center